



ՍՈՒՐԲ ԽԱՉ ԿԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ

HOLY CROSS ARMENIAN CHURCH

318-27 STREET, UNION CITY, N.J. 07087

201 864-2480

REV. FR. DIRAN PAPA ZIAN, Pastor

29 Փետրուար, 1988

Գերշ. Տ. Թորգոմ Արք. Մանուկեան,
Առաջնորդ,
Նիւ Եորկ, Ն.Ե.,

Գերշ. Սրբազան Հայր,
Համաձայն թեմական կանոնագրութեան՝ ծխական համայնքիս Տարեկան Անդամական ժողովը կայացաւ 7 Փետրուար 1988-ին, յաւարտ կիրակնօրեայ պաշտամունքին, մեր նախագահութեամբ, եկեղեցւոյս կեդրոնի սրահին մէջ:

Եկեղեցւոյս 105 հոգի հաշուրւող անդամներէն իբրեւ տրատու անդամներ, 54 հոգիի մասնակցութեամբ, տարեկան անդամական ժողովը օրինաւոր համարուեցաւ:

Սոյն ժողովին մէջ, ընթացիկ աշխատանքներու կարգին, ինչպէս տարեկան գեկուցումներ՝ Հովուի, ծխական խորհուրդի եւ օժանդակ կազմակերպութեանց, ի մէջ այլոց նաեւ կատարուեցան ընտրութիւններ՝ ծխական խորհուրդի, - մասնակի 5 հոգի -, ինչպէս նաեւ ընտրողական եւ Հաշուեքըննիչ յանձնախումբերու - Յ-ական հոգի -:

Ծխական խորհուրդի անդամակցութեան համար ընտրելի ներկայացուած 5 հոգինոց թեկնածուներու ցանկին վրայէն, նոյն ինքն 5 հոգիները ընտրուեցան երկու տարուան շրջանի մը համար, համաձայն իրենց ստացած քուէներով թիւին:

Այսու ստորեւ կը ներկայացնենք ծխական խորհուրդի ընտրութեան արդիւնքը, անուններով եւ քուէներու թիւով:

Ֆիլիփ Արփիարեան	54	քուէ
Հարութ Ազմելեան	54	,,
Նուպար Տօրեան	54	,,
Զաւէն Յովսէփեան	53	,,
Հրանդ Կիւլեան	52	,,

Վերոյիշեալ ցանկը կը ներկայացնենք Ձերդ Սրբազնութեան առ ի քննարկում եւ ի վաւերացում, որպէս զի ձեր հայրախնամ օրհնութեամբ նորընտիր ծխական խորհուրդը անյապաղ լծուի աստուածահաճոյ իր գործին, վասն պայծառութեան սուրբ եկեղեցւոյս եւ ի փառս Ամենակալին Աստուծոյ:

Մատչելով ի համբոյր ձեր Ս. Աջոյն,
խոնարհ Աղօթակից՝

Ս. Տիրան Ա. Բնյ.

Ս. Տիրան Ա. Բնյ. Փափագեան,

Հովիւ